

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ելնելով մեր փորձից և համոզվածությունից՝ մենք հաստատում ենք հետևյալը.

1. Մենք ընդունում ենք մեր պատասխանատվությունը Բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման վերաբերյալ, ինչպես նաև այն, որ Բանկը հետևողական է եղել Բանկի խորհրդի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթների կիրառմանը, հաշվարկների կատարման ժամանակ կիրառել է հիմնավորված գնահատումներ, պահպանել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջները, հաշվապահական հաշիվների գրանցումները վարել է ճշգրիտ, ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է բանկի գործունեության անընդհատության հիման վրա:
2. Բանկը հետևողական է եղել Հայաստանի Հնարապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պայմաններին համապատասխանող Բանկի խորհրդի կողմից հաստատված և ներդրված արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի շահագործմանը:
3. Բանկը ապահովել է ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն բացահայտող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրումը:
4. Բանկն անհրաժեշտ միջոցառումներ է ձեռնարկել բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և այլ անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ:

Վարչության նախագահ

Գլխավոր հաշվապահ



Կ.Ս.Ներսիսյան

Ա.Վ.Վանյան